ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Կոնցեռն-Էներգոմաշ ՓԲԸ-ն ԲԿԳԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/11 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի				
	ֆիրմային անվանումը	ապրանքային նշանը	մակնիշը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
1	NanoFrazor System	NanoFrazor	NanoFrazor	Heidelberg Instruments Mikrotechnik GmbH	"Սարքի ֆիզիկական չափսերը (table-top unit)՝ 44 x 40 x 45 սմ, զանգվածը՝ 50 կգ, կառավարման համակարգը՝ 84 x 60 x 56 սմ տիրույթում, զանգվածը՝ 80 կգ։ Նախշակաղապարման հնարավորություններ. նվազագույն կառուցվածքի չափը՝ 15 նմ, նվազագույն գծերի հաստությունները և միջգծային հեռավորությունները՝ 25 նմ, Նվազագույն քայլը (grayscale, 3D-resolution) PPA-ում՝ 2 նմ: Առավելագույն գրման/նախշապատկերման դաշտի

					մակերեսը՝ 60 x 60 մկմ։ Դաշտերի կարման (միացման) ճշտություն (առանց մարկերի/նշիչի, տեղում պատկերման միջոցով)՝ 25 նմ։ Վերադրման ճշտություն (առանց մարկերի/նշիչի, տեղում պատկերման միջոցով)՝25 նմ։ Սկանավորման և գրման արագություն՝ 1 մմ/վ։ Գրման/նախշապատկերման արագություն (50 նմ լուծողունակության դեպքում) ՝ 1000 մկմ2/րոպե։ Տոպոգրաֆիայի պատկերում. Կողմնային պատկերման լուծողունակություն՝ 10 նմ։ Ուղղահայաց լուծողունակություն (տոպոգրաֆիային զգայունություն)՝ մինչև 0.5 նմ։ Պատկերման արագություն (50 նմ լուծողունակության դեպքում)՝ 1000 մկմ2/րոպե։ Բազային համակարգի պարամերտեր. Տակդիրի չափսեր՝ 1 x 1 մմ2 - 100 x 100 մմ2 (150 x 150 մմ2 որոշակի սահմանափակումներով)։ Տակդիրի հաստություն մինչև 10 մմ։ Օպտիկական մանրադիտակ. Թվային լուծողունակություն՝ 0.6 մկմ,

						դիֆրակցիայի սահման՝ 2 մկմ, դիտման տիրույթ՝ 1.0 x 1.0 մմ, ավտոֆոկուս։ Ասեղի/կանտիլեվերի ֆիքսման տեխնոլոգիան՝ մագնիսական բռնակ, ասեղի փոխարինման արագությունը՝ 1 րոպե։ Ակտիվ տատանումների (վիբրացիայի) մեկուսացման համակարգ։ Նանոֆրեզային կանտիլեվերի ինտեգրված բաղադրիչներ՝ ասեղի ջեռուցիչ, տոպոգրաֆիայի սենսոր, էլեկտրաստատիկ շարժիչով։ Ասեղի ֆիզիկական չափսեր. կոնի սրածայրում տրամագիծը՝ մինչև 10 նմ և 750 նմ երկարությամբ։ Ասեղի ջեռուցիչի ջերմաստիճանային միջակայք՝ 25 °C - 1100 °C, քայլը՝ մինչև 1 Կ։ Սնուցում՝ 230 Վ AC, 10Ա։ Նանոֆրեզային լիտոգրաֆիայի համակարգ, որը հիմնված է ջերմային սկանավորող զոնդային լիտոգրաֆիայի վրա։ Սարքը օգտագործում է գերսուր ծայրով տաքացվող զոնդ, որն օգտագործվում է բարդ նանոկառուցվածքային համակարգերի ստացման (փորագրման) և միաժամանակ

					դրանց կառուցվածքային բնութագրերի ստուգման համար: Տաքացվող ծայրը նախատեսված է կամայական, բարձր լուծողունակությամբ նանոկառուցվածքներ ստեղծելու համար՝ ռեզիստների տեղային սուբլիմացիայի միջոցով: Այն հնարավորություն ունի տեղային բուրեղական կառուցվածքի փոփոխություն կատարելու՝ ամորֆից միաբյուրեղ և հակառակը: Համակարգն ունի հնարավորություն ստանալու նյութերի տոպոգրաֆիական պատկերները՝ ջերմային սկանավորող զոնդի միջոցով, ինչպես ատոմաուժային մանրադիտակի արտաբերած պատկերները: Սարքավորումը ունակ է աշխատելու կիսահաղորդչային (գերմաքուր նանոլարերի, նանոձողերի, քվանտային կետերի և այլ տեսակի նանոհամակարգերի պատրաստում, նանոկառուցվածքների վրա մետաղական կոնտակտների/հաղորդիչ ուղիների պատրաստում, ժամանակակից դաշտային տրանզիստորների

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

Концерн-Энергомаш ЗАО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԲԿԿԿ-ԷԱՃԱ ԴԱԲ-26/11 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар				
	фирменное наименование	товарный знак	марка	наименование производителя	технические характеристики
1					(MOSFET, FINFET) պատրաստում), օպտիկական (նանոչափային ալիքատարների պատրաստում և տեղայնացում), կեսաբանական (ԴՆԹ մոլեկուլների կամայական նախընտրելի ձևով տեղայնացում (դասավորում) ԴՆԹ - օրիգամի տեխնոլոգիայով)։ Նանոֆրեզային լիտոգրաֆիայի համակարգը հնարավորություն ունի աշխատելու առանց ֆոտոդիմակների։ Երաշխիքային ժամկետ 1 տարի։